Ք Ա Ղ Վ Ա Ծ Ք

«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան»
պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի՝
2015 թվականի սեպտեմբերի 30-ի նիստի N 1 արձանագրությունից

ԼՍԵՑԻՆ.- **«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի կանոնակարգը»** հաստատելու և գիտական խորհրդի 2010 թվականի մարտի 5-ի նիստում (արձանագրություն N 7) հաստատված «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի գիտական խորհրդի կանոնակարգը» ուժը կորցրած ճանաչելու մասին հարցը:

Զեկուցող՝ ռեկտոր, տնտեսագիտության դոկտոր պրոֆեսոր **Կ. Լ. Աթոյան:**

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.-Պրոֆեսորներ Գ.Ի.Վարդանյանը, Հ.Ի.Աղաջանյանը, Վ.Ա.Սարգսյանը, Մ.Ե.Պետրոսյանը, դոցենտներ Ա.Շ.Մարգարյանը, Պ.Ա.Քալանթարյանը, տնտեսագիտության թեկնածու Ս.Ս.Խաչատրյանը, իրավաբանական բաժնի պետ Գ.Տոռոզյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.-

1. Ղեկավարվելով «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության 17-րդ կետի 1-ին ենթակետով՝ **հաստատել «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի կանոնակարգը:**

2. **Ատենախոսությունների թեմաների ճշգրտման նպատակով ստեղծել հանձնախումբ՝ կազմված համալսարանի տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսորներից: Ատենախոսությունների թեմաների ներկայացվող ցանկը հաստատել գիտական խորհրդում:**

3. **Ուժը կորցրած ճանաչել** Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի գիտական խորհրդի 2010 թվականի մարտի 5-ի նիստում (արձանագրություն N 7) հաստատված «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի գիտական խորհրդի կանոնակարգը» (որոշումն ընդունվեց բաց քվեարկությամբ՝ միաձայն):

Գիտական խորհրդի նախագահ **Կ. Լ. Աթոյան**

Գիտական խորհրդի քարտուղար **Ն. Հ. Դարբինյան**
30.09.2015 թ.